

ԵԿԷ՛Ք, ՓՈԽԵՆՔ ՀԻՆԸ ԲԱՅՑ Ո՞Վ ՊԻՏԻ ՎՃԱՐԷ ԿՈՐՈՒՍՏԻՆ ԳԻՆԸ...

Իմ ազնիւ ընթերցող, Կ'ապրինք արագընթաց դարու մը մէջ, ուր ամէն ինչ կը կատարուի շատ ա–րագ, սրընթաց։ Զարմանալու բան կա՞յ, սա հրթիռային դար է, վե՛րջ։ Ուրեմն, ստեղծուած համակարգիչը, իրողապէս դարձաւ յեղափոխութիւններու պատճառ, ուր դրական ու բացասական երեւոյթներ մերթ ընդ մերթ կը ճակատին, զար–մացնելու մատիճան։ Սակայն մենք, այդքան ալ շշմելու պատճառ չունինք, քա–նի որ մեր սօտ լաճմախակի են յեղափոխութիւններն ու արդիւնքները, նոյնիսկ համակարգիչի ստեղծումէն շա՛տ առաջ։ Այլ խօսքով, յեղափոխութիւնը մեր՝ հայերուս մէջն էր ի սկզբանէ։..

Թէեւ, պէտք է արձանագրել եւ անչապաղ, որ իմ մատնանշածը ակնարկու–թիւն մըն է առնչուած՝ սերնդափոխութեան հետ, երեւոյթ մը որ կա՛ր ու կալ, որուն իրազործումը որպէս անհրաժեշտութիւն ճիշդ է կը բերէ թարմ շունչ ու կենդանութիւն, բայց երբեմն ալ կը կատարուի հակառակը, ուր հարկադրաբար կը խածնենք մեր տասը մատները եւ կը ծեծենք մեր արդէ՛ն կոտորղ ծունկերը, յուսահատ ապրումով, եւ ուշացած գղջումով... Երբ կը հանդիպինք նորակոչիկնե–րու անհոգութեան ու անտարբերութեան... որ կը քայքայէ մեր աշխոյժ առօրեան, զայն մատնելով ձմեռնային թմբիրի։..

Ազգային, միութեմական ու ընկերային կառոյցներէ ներս, բարեբախտութիւն է որ տակաւին կալ կամուրջ սերունդ մը, որ «հին»–ի ու «նոր»–ի մէջ հանդիսա–նալով իրապէս կենդանի աշխոյժ կապ, կը շաղկապէ մօտաւոր հինը նորին հետ, առողջ հիմներու վրայ դնելու համար մեր գուրգուրած ինքնութիւնը, ուր կարելի է տակաւին շնչել քշի՛կ մը հաշարոյր մթնոլորտ, երբ «համաշխարհայնացում» կոչ–տղ եօթ գլխանի գագանը քանի տակաւին վերջնականօրէն չէ՛ լափած փոքրիկ ազգերու մշակոյթներն ու լեզուները։

Սակայն, շատերու կամքէն անկախ, երբեմն, կը պղտորին մեր ազգային «լճակներ»–ը՝ ըստ օրէրետութաբանական գրասենեակի տրամադրութեան, եւ կը պատահի՝ անպատահելիւն, ուր «անցեալ կատարեալ»–ը երբեմն կը պատճառէ սիրոխառնութ՝ ակա՛նայ, երբ կը սպառնայ «բացարձակ ապառնիք», քու եւ իմ կամքէս անկախ, շշմեցնելով հանդիսատեսը, ուր բեմադրիչն ու դերասանը կը նոյնանան՝ տարօրինակօրէն, երբ խոշո՛ր գիծ մը կը քաշուի ազգային դիմագիծի ու նկարագրի վրայ, ուր կը թաղուին լեզու ու պատկանելիութիւն, գիր ու գրա–կանութիւն, մշակոյթ ու արուեստ, երբեմնի հայադրոշմ գեղեցիկ պատկերը աղա–ւաղելով։ Բացառութիւննե՛րը՝ համբոյրելի՛ր... այսօր եւ վաղը, միայն թէ պահէինք ու պահպանէինք, ժառանգուածը։

Սա, վստահաբար կատակ չէ, բայց թերեւս թուի «հոգեբանական կատակեր–գութիւն» կամ «երգիծական հնարք», սակայն, ի վերջոյ կատակն ալ «կէս կա–տա՛կ, կէս շիտա՛կ» կը միտի մատնանշել խոցելի երեւոյթներ, որոնք ընթերցուե–լու ու լսուելու պարագային դառնան լրջութիւն, եւ ինչո՛ւ չէ, ծառայեն իրենց նպատակին, ուղղէ փորձելով կարգ մը խոցելի կէտեր, որոնց սրբագրումը պիտի արժանանար բոլորիս գեմահասականցի՞ն՝ բանի եւ գուցէ՛ գործո՞ւ։

Մեր ընթերցողները ծանօթ են մեր կիսականաչ ու մասամբ ընդունելի դէռ եւս գոյութիւն ունեցող «պուրակներ»ուն, ուր սակայն վերջերս, եղանակի եւ օդի փո–փոխութեան պատճառով սկսած է տիրել «անատի օրէնք», քաղաքավարու–թեան վնասներու հասցուցած «քարիք»ներու արդիւնքով, ուր չորին հետ կ'այլի թաջը՝ կամարաբար, հակառակ գարնանային անձրեւներուն։ Ընդվզի՛ր։ Բայց չէ՛ որ խօսեցանք «կատարեալ անցեալ»–ի մասին։ Անցինք նորին։ Առա՛ջ, առանց յուսահատութեան ու առանց արցունքի, սպասելով դէռ գալիք անակնկալներուն, որոնք կրնան փոշի ցանել մեր յիշողութիւններուն վրան, ետէ...։

Մեր փոքրիկ «հիանցքը, որ կը գտնուի պուրակի ճիշդ եզրին, հակառակ հաւե–րու ունեցած «թոշնակոյփ»ին, որուն պատճառով գրեթէ հաւերուն մեծամասնու–թիւնը մատնուեցաւ ամլութեան, տակաւին կը հաշուէ «ճուտիկներ», որոնք շատ կը սիրեն թոշնագակներու յատուի աքլորամարտը՝ կանուխէն։ Անոնք, նոյնիսկ տակաւին որպէս երէկոյս վառեակներ, դէռ չ'հառուեցաւ եւ կտուցները չկարծ–րացած, պատրաստ են մեծամարտելու եւ՝ հաւկիթներ անելու...։ Բայց ի՛նչ կարե–ւոր է կտուցին կակուղ կամ կարծր ըլլալը... բաւական չէ՛՝ անոնց նոր ու թարմ շունչը, ճաշակաւոր ու ներկայանալի տեսքը, երբ անոնք ո՛չ թէ առաստները, այլ մթնշաղէն ենք, ընդհանրապէս մութին է որ կ'երգենք... ձայները ձգելով բաց անշքպետին մէջ, կուկուլիկը՛ւ...կուկուլիկը՛ւ... բազմելու ու հանգստանալու համար բազմոց ու աթոռ կ'ուզենք, կուկուլիկը՛ւ...։

Եւ՝ հրա՛շք...։ Գիշերային աքլորականչը «թուխ»–ի ժամանակաշրջանէն շա՛տ առաջ կ'աւետէ «բարի լույս»–ը, սպասուող «աղուոր յուս»–ը եւ կ'որակաւանչ նա–եւ՝ կուլը...։ աչսինքն՝ սպասող կողմը, երբ երկունքը կ'ըլլայ ակնկալուածէն շատ արագ, անշուշտ «սէզարիէ՛ն», ուր վիրաբոյժ բժիշկներ կը խաղան իրենց վար–պետ դերը եւ աշխարհ կուգան նո՛ր ու սիրասուն վառեակներ, որոնք պատրաստ են որպէս ջահակիրներ ու դրօշակակիրներ հպարտ ու խրոխտ քալելու կարաւանի առջեւնէ, երգելով բարձրաձայն՝ «շոգեկառքը փութ, փութ, փութ»...։

Ամէնքս ալ պիտի փափաքէինք, որպէսզի շոգեկառքը քալէ՛ր, վազէ՛ր, ու՝ «մեզ հոս ու հոն փոխադրէ՛ր»։ Բա՛յց... շոգեկառքի անիւները կը մնան նոյն տե–ղը։ Պատճա՛ռը։ Այս շարժականով, այս շոգեկառքը չի՛ կրնար քալել, ըսաւ փոր–ձառու վարպետը։ Ուրեմն, առաջժմ՝ տեղքալ։

Մեր հին, երէկուայ երգերը մնացի՞ն՝ հնացա՛ծ... անհրապոյր, պաղ ու «տէմո–տէ՛» եւ հազիւ թէ կարենանք երգել հիմա առջի գիշերուրնէ մնացած աղօտ մեղեդի մը, կիսաձայն. «ձախորդ օրերը ձմրան ճման կուգան ու կ'երթան», նոյն ժամանակ ակամջ տալով հեռուներէն եկող ակարս սկաւառակի մը հեւքին, որ կ'երգէ. «մենք կը խաղանք անտառին մէջ, երբ որ գալլը հոս չէ»...։

Գա՛լլ... մի փնտռէք։ Պատճա՛ռ...։ Աշխարհի վրայ փշող «տնտեսական քա–մին» մեր ճանչցած երէկուայ բոլո՛ր ծանօթ «գազակ»ները քջեց, տարա՛ւ... ան–ծանօթ ուղղորդեամբ։ Բայց, տարօրինակ՛ի, հազիւ վաճը գտաւ քամիին վազքը, անակնկալօրէն հրապարակ ելան սիրասուն «գառնուկնե՛ր», բրդո՛տ, գեղեցի՛կ, որոնք գուարթացուցին պուրակին ամայացող փողոցները, ներդաշնակ «մային–ներ»ով, մէ՛...մէ՛...մէ՛...։ Ուրախացա՛նք շիտակը, եւ՝ ինչպէ՛ս։

Սակայն, մեր ուրախութիւնը երկար չտեսեց։ Զարմամալիօրէն նշմարեցինք, որ նորածնունդ ու կարճակեր «գառնուկներ»ը շատ արագ սկսան հրաժարիլ իրենց «մային»ներէն... Եւ միաբերան սկսան քշի՛կ–քշի՛կ ցոյց տալ իրենց սլաքատու ատամները եւ՝ ոռնա՛լ...։ Ափա՛տ, ինչ դժուար ու տխուր է ինքնախաբէութիւնը։ Գառները՝ ոռնա՛լ...։ Գիտութեան ու յառաջդիմութեան դար է, ամէն ինչ կարելի է ակնկալել եւ՝ տեսնել նոյնիսկ, չապշելով։

Կասկած չկայ որ գիտութիւնն ու նորարարութիւնը կը մրցին արագօրէն, շու–կալ ու հրապարակ գրաւելու։ Մօտիկ անցեալին քաղաքական, տնտեսական ու առողջապահական աշխարհը ողողող «խենթ կովներ»ու հիւանդութեան ու առաւ–պելին յաջորդող «թոշնակոյփ»ը բաւական զբաղցոց մարդկութիւնը։ Համաշխար–հայնացման փոթորիկը իր երախին միշտ ունի նոր բան մը. այժմ՝ «խոգակոյփ»–ն է մեր հիւրը, որ առանց «վիզա»ի կը մտնէ ամէն սահմանէ ու դարպասէ ներս։

Նոյն «համաշխարհայնացում»ը թէեւ, կը զգանք որ սկսած է թակել նաեւ մեր դռներն ու պատուհանները, «այլափրոնթեան», «այժմեականութեան», ու «ժա–մանակի հետ քալլ պահել»ու պիտակին տակ, իր հետ բերելով իսկական «մար–դակոյփ» մը, որ կը սպառնայ մեր հալու ինքնութեան, պատկանելիութեան եւ անունին, որուն զոհը պիտի դառնանք... Եթէ կլլենք հրամցուած օտարաբոյր «ղեղահատ»ը... որ ծանր պիտի ճնշէ մեր հայատրոփ սիրտերուն ու հալաշունչ հոգիներուն վրայ։

Արդեօ՞ք կարելի է դիւրութեամբ կլլել այդ, թե՛...։

ՀԱՄԲԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԱՐԱՐԱՏ

ԳԻՇԵՐ . ՄԱՅԻՍԻ ԻՆԸ

ՀԱՄՐԱ

Մայիսի 9–ի գիշերն է․ Համրան իր հին ռիթմով երբ քաղաքի բոլոր բնակիչները արդէն կը վերադառնան տուն ու մայթեզրին կը մնայ սկկարեթ ծախող Հին բարեկամ մը․դէմքը արեւէն պրած որ պիտի սրամտէ եւ քանի մը քառ ճետէ հալութեան մասին․․․ իսկ ներսը սրճարա–նին, զուարճալի ձայնը ապակեայ բաժակներուն եւ փոքր ամաններուն որոնց հանգիստ սահքը, դեղնորակ օրիոր–դի ձեռքերու վրայ պիտի խանգարուի միմիայն խալա–կան սուրճի անհոգ սարքի շոգիին ձայնով մերթ ալ դգալ–պատառաքաղներու ձայնով։

Իսկ տողերն ու բառերը յատկապէս տառերը զգօն կերպով կը շարուին սպիտակ թուղթին վրայ, որպէսզի տառախալներու ներկայութիւն չմտցնէ եռանդը գրե–լուս․․․ եռանդը որ կը հալածէ ամէն գրողի։

ԱՐՄԷՆ ԱՅՎԱԶԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Չեմ գիտեր ուրկէ կուգայ Վիգէն Զագարեանի պատ–կերը աչքերուս․ յուզումի պէս սանկ թթթեւ ոգի մը կը մտնէ մէջս, կը տպէ ու կը հեռանայ․ թթու է ամէն բան․ թթու է աշխարհը, դէմքերը դեղին են կարծես․ բայց ասիկա յուզում չէ որովէհետեւ Վիգէն տխրութեան եւ յուզումի հակամէտ չէ․ անոր անունը ինչպէս բոլոր մե–ծերուն անունները մաս՝ չեն հոտիր այլ կը պատմեն հայոց յաղթանակին մասին։Վիգէնը ուզած էր ընտրել դժուարին ճամբան․ ան առիթ չունէր մտածելու եւ խորանալու ուս նոր համար մահը եղաւ գեղեցիկ ու երազային բան մը, որովհետեւ մեռնելու ճետեց իր ձեռնոցը եւ ըսաւ իր ներ–կան։ Վիգէնը եւ միաները կը պատկանին բոլորին, ու յաղթանակի գետիհը որ այս պարագային Արցախն է տեղ մը կը միատրէ, կը միացնէ մեզ բոլորս․ միակ ազգային գետինն է դարաբաղը որ բոլորս կրնանք ու պարտաւոր ենք դառնալու մէկ վերածուելու երկինք սլացող թիփ մը։ Կարեն Ջաւէն Խտրշեանի յուշարձանը ըլլանք դէպի վեր․․․

Հոն բոլոր խաղերը պիտի մարին, հոն լուսաւոր է երկինքը որովհետեւ Դարաբաղը իր սիրաճնէն եւ արիւ–նով նոր էջ բացաւ մեր լերդացած, մեր պարպուած առ օրեային մէջ ու այն օրերուն չէր որ սփռուք ծայրէ ծայր տօնեց իր պատկանելիութեան տօնը․ տօնեց մահու կե–նաց կոիկին տօնը․ տօնեց իր Ցաղթանակը։ Բաւերով չէր ատիկա, այլ կոխով, արինով ու մահուան յաղթելու կամքով։

Համրան իր եռանդին մէջ կը դանդաղի որով գիշեր–ան խոհուրդը անոր երակներուն մէջ պիտի բանայ նոր պատմութիւններով լեցուն ժամեր որ պիտի երկարին սին–չեւ առաւուս։ Իսկ մայիս 9ի գիշերը բոլորովին տարբեր գիշեր է որովհետեւ հակական ճակատին վրայ մինչեւ երկէ կատարուած դէպքերը կը կատարուին ու կը բերեն այնքան մը զարմանալի նորութիւններ որոնց առջեւ լռելն այլեւս անհնարին է։

Որովհետեւ։ Բացատրեմ, կը կարդամ Արմեն Այվազ–եանի հետ կատարուած այն հարցազրոյցը որ կը հաւա–տամ որ նոյնութեամբ տպագրուած է Մայիս 9ի «Ազդակ»ի համարին մէջ, –որն իր հերթին հարցազրոյցը վերցու–ցած է՝ .«Իրաւունք Տէ Ֆաքթօ»էն։ Արմեն Այվազեանը լաւ կը ճանցնամ, կը ճանցնամ անոր ազգային մօտեցու–մը ու անոր երակներուն մէջ կը հաւատամ, կայ բաւա–կանին կուտ հաւատք եւ ազգային աւին, հակառակ ա–նոր որ ան իր մօտեցումներու մասին կը բացատրէ ըսե–լով որ, իր մօտեցումները կու գան պատմական ենթա–փորձի քննութիւնէն, այլ խօսքով անոր խօսքը կը հիմ–նուի «պսօրուան սաղը վերոնութեան վրայ»։

Այվազեան բաւական ուժեղ հարուած կու տայ Հա–յաստանի քաղաքական բոլոր հատուածներուն, կուսակ–ցութիւնները ներառած, ու չի մոռնար կայսրին կայսրին տալով, մեղադրանքի բաժին հանել նաեւ ու մանաւանդ այսօրուան իշխանութիւններուն։ Հարցազրոյցի միտք բանին ամփոփելու համար պիտի ըսել որ Այվազեան դէմ է Հայաստան– Թուրքիա յարաբերութեան բնակա–նոնացման եւ այդ գործընթացին մէջ, կը տեսնէ վտանգ եւ ոչ միայն․․․ այդ վտանգէն անդին, կայ հայաստանի փլուզման վախը, ուր հերթաբարբար կրնան փոլ գալ Հա–յաստանի նոր հասնող արդիւնաբերութիւնը, որմէ ետք պիտի կատարուի այն ինչ որ Թուրքիան փորձեց կատա–րել 1915–1923 երկարող ժամանակաշրջանին, այսինքն ազգային անվտանգութեան համակարգի փլուզում, ո–րուն պիտի յաջորդէ Ազրպէյճանի կողմէ պատերազմի հրաքրում․․․ որմէ ետք ցտեսութիւն Հայաստան։ Թե՛րե–սա ընթերցողը պիտի համարի ըսել որ, պատկերը բա–ւականիչ չափազանցուած է, բայց եւ այնպէս զգօնու–թիւնը մանաւանդ պատմութիւնը լաւ ճանցցողի մը հա–մար կարեւոր հանգամանք է ու երբ խօսք կերթայ Ար–մէն Այվազեանի մասին, պիտի ըսեմք որ ան կա գիւտ պատմութիւն եւ այդ իմացումը մասնագիտական ենթա–հող ունի։ Զգացական բառեր չի ճետեր Այվազեան,

անոր խօսքը ունի չափ ու կշիռ, ու անկէ անդին երթա–լով խօսքը հիմնուած է պատմութեան դասերուն վրայ։ Ծիծաղ ու խոր ցաւ կայ երբ Այվազեան ձեռ կ'առնէ Ան–թալիա զբօսնելու գացողները երբ հարց կուտայ թէ արդ–եօք անոնք պիտի պաշտպանե՛ն Հայաստանը օրհասի պահուն։

Վերջապէս Այվազեան կը խօսի իր յուսախաբութեան մասին երբ կ'ակնարկէ Հայաստանի արտաքին գերա–տեսչութեան մասին եւ կը պարզէ որ հոն – այդ նախա–րարութեան մէջ ազգային երակ ունեցողներուն համար տեղ չկայ ընդհանրապէս։

Այվազեան լարած է ռումբը եթէ կ'ուզէք։ Ահազանգը որ կը հնչէ բաւականին ծանր ուժանակով բեռցուած անա–զանգ է, ու ասոր դիմաց հարկ է որ Սփիւռքը շարփի։

Միւս կողմէ ու հակառակ հնչեցուած անազանգին, Հայաստանի Իշխանութիւնները կը շարունակեն անխօս կերպով առաջ քշել Թուրքիոյ հետ յարաբերութեանց ջեր–մացման ու բնականոնեցման գործընթացները, առանց լսելու Սփիւռքի կարծիքը կամ առնուազն գաղթական դարձած Հայութեան խեղդուած ձայնը․ անոնք սառն վերաբերմունք ցոյց կու տան եւ ոչ միայն, նոյնիսկ կը մերժեն Սփիւռքեան թերթերուն հարցազրոյցներ տալ․ վերջին օրինակը արտաքին գործոց նախարարին խուսա–փողական կեցուածքն էր եւ հարցազրոյց չշնորհելու ան–հասկնալի նոյնիսկ դատապարտելի երեւոյթը։

ՍՓԻՒՐԻ ԴԵՐԸ

Բաւական կրկնուած թեմա է ասիկա, որուն աւարտին պիտի յուսախաբութեամբ արձանագրել, որ Սփիւռքը այս պահուն խելքի գալու միտք չունի, որովհետեւ անոր մտա–ւորական տարրը զբաղ է «աւելի կարեւոր եւ աւելի ան–կինանդարձային ձեռքերումներով» իսկ օրուան դէկալա–րութիւնները անկախ անկէ որ իւրաքանչիւրը մխրճուած են տեղական օրակարգերու մէջ, կը շարունակեն թծնե–լու քաղաքականութեամբ տարուած ըլլալ ու գլուխ ծռել Հայաստանի դէկալկարներուն առջեւ, յուսալով ու հաւա–տալով որ, պիտի բախտաւոր օր մը իրենք ալ արժանա–նան Հայաստանի Հանրապետութեան բարձրագոյն պա–տիւներուն ու տիւղոսներուն։

ՎԵՐԱՎԱՐՁ ՇՈՒԾԷՆ

Առնուազն պիտի վերադառնայ անոր ոգին․ անոր վարակող Ոգին, որ կրակի պէս պիտի արծարծուի մեր մէջ․ Վիգէնի անունը հոս չեմ գործածեր որպէս տսկա–կան օրինակ, անոր անունը հնարաւոր չէ գաւորոքել այն հարիւրներու անուններէն, որոնց արիւնը միախառնուե–ցաւ Դարաբաղի հողին․ այլ այն պատճառով որ Վիգէ–նին հետ ունեցածս անհատական բարեխաժութիւնը մղում մը կ'առաջացնէ մէջս որ խօսիմ իր հետ, մտածեմ իր մասին ու մէջս եղող տագնապին նայիմ իր աչքերով։

Կը մեռնի ամէն ինչ․ մեր ժամանակակներուն կ'իյնալ ամէն արժէք․ բայց լաւ է որ Վիգէնին ու բոլոր Վիգէն–ներուն օրինակը Սփիւռքի մէջ –առնուազն մեր այս կող–մերը– կը մնայ կենդանի։ Պիտի ուզէի որ Վիգէնը այսօր վերադառնար ու տեսնէր Հայաստանի ներկան, պիտի ուզէի որ հերթուները օր մը յառնէին ու տեսնէին այսօր–ւան քաղաքական «ձեռներէցներուն» խելկատակութիւն–ները։ Ես պիտի չպատմեմ Վիգէնին որ ինչ ընթացք կրնան ստանալ այսօրուան Հայաստանի դէկալկարութեան «համարձակ» քայլերը։Ես պիտի չուզէի մօր քսել ոչ ոքի անուան վրայ, ես պիտի չուզէի երթալ ծայրահեղ ու վը–տանգաւոր ենթադրութիւններու․․․ Ես կը տսկամ սահան–քէն, Հայաստանի Իշխանութիւնները մեր ժողովուրդը կը տանին սահանքի․․․ Ես կը վախճամ կրակէն –վախը մէջդ պէտք է բերէ իմաստութիւն եւ յարմարուելու կամք– Հայաստանի իշխանաւորները կրակի հետ կը խաղան։

Ու այսօր Յանուն Արցախեան Ցաղթանակին եւ պի–տի չուզէի Հերոսներուն պատմել, պարտութեան ոգիին մասին։ Պիտիտեանս ոգին պիտի ճգնէ իր սաղմին մէջ, իսկ եթէ անհնարին է որ այսօր շատեր երթը շարունա–կեն, համոզիչ պիտի ըլլայ անոնց հեռացումը․․․

Մարտի դէպքերէն ետք, Հայաստանի Իշխանաւոր–ները կը շարունակեն խելկատակութիւնը։

Այս թատերակը ունի ասարտ – գիտեմ․ բայց աւելի լաւ է որ աւարտին, կարագոյրները գոցելէն առաջ, մար–դիկ ուշքի գան․․․ որովհետեւ այս ճանապարհներով վերադարձը կրնայ սուղ նստիլ մեզի։

Հայաստանը կորսնցնելիք չունի, Պլոքատա, արգելա–փակում կամ պղքթօք․ շրջափակում եւ կղզիացում․ բո–լորը անցած խաղեր են։

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

- *Վիգէ՛ն ԶԱՔԱՐԵԱՆՆԸ Արցախ Նահատակուած Լիբանանահայ երիտասարդ է, իսկ ԱՐՄԷ՛ն ԱՅՎԱԶ–ԵԱՆԸ, ներկայիս Երեւան սայրող Պատմաբան։*

ՀԱՂՈՂԱԳՐՈՒԵԼ

Լրատուամիջոցներու ճամբով անակնկալօրէն եւ խոր ընդվզումով կը տեղեկանանք, որ 22 Ապրիլ 2009ին, գաղտ–նի գործարքով Յայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիոյ Նախարարներուն միջեւ ստորագրուած է, բովանդա–կութիւնն ու ներքին ծալքերը ցարդ չբացայայտուած, «ճանապարհային քարտեզ» անունը կրող փաստաթուղթ մը։

Յեղասպանութեան 94րդ տեղադրածի անմիջապէս Նախօրեակին բացայայտուած նման գործարք մը, միայն կրնա ծառայել ցեղասպանի հեռու եւ ժօտիկ նպատակներուն ու շահերուն, բայց երբեք մեր ժողովուրդի անժա–ման